

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 26/7

4 նոյեմբերի 2014 թ.

Քննարկվեց «Կոմսալ» ՍՊԸ 02.10.2014 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Կոտայքի ՏՀՏ 29.09.2014 թ-ի թիվ 028483 որոշումն անվավեր ճանաչելու վերաբերյալ:

«Կոմսալ» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

1. 19.08.2014 թ-ին կազմվել է ստուգման թիվ 1009650 ակտը (այսուհետ՝ Ակտ), որով «Կոմսալ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) առաջադրվել են լրացուցիչ հարկային պարտավորություններ 29.656.920 դրամի չափով:

2. 20.08.2014 թ-ի Ակտը հանձնվել է Ընկերությանը:

3. 28.08.2014 թ-ին Ընկերությունը վիճարկման հայցադիմում է ներկայացրել վարչական դատարան:

4. 04.09.2014 թ-ի որոշմամբ հայցադիմումը վարույթ է ընդունվել:

5. 18.09.2014 թ-ին ՏՀՏ պետի կողմից որոշում է կայացվել «Կոմսալ» ՍՊԸ-ից 1.148.300 դրամ գանձելու վերաբերյալ:

6. 29.09.2014 թ-ի թիվ 028483 հանձնարարագրով (այսուհետ՝ հանձնարարագիր) հանձնարարվել է «Կոմսալ» ՍՊԸ-ին պատկանող գույքի վրա ընդհանուր շահութահարկի գումարի՝ 1.148.300 դրամ չկատարված պարտավորությունների չափով արգելանք դնել:

7. 29.09.2014 թ-ին ընդունվել է թիվ 028483 որոշումը (այսուհետ՝ Որոշում), որով արգելանք է դրվել «Կոմսալ» ՍՊԸ-ին պատկանող ավտոտրանսպորտային միջոցների և Կոտայքի մարզ, գ.Ջրվեժ 20 փողոց 3 հասցեում գտնվող գույքի վրա, «Արմսվիսթանկ» ՓԲԸ, «Ինեկո բանկ» ՓԲԸ բանկային հաշվեհամարների վրա, ինչպես նաև դրամարկղի վրա՝ 1.148.300 դրամի չափով:

8. Ընկերությունը մինչև հանձնարարագիրը և Որոշման ընդունումը դեռևս 23.09.2014 թ-ին վճարել է 1.150.000 դրամ գումարի չափով շահութահարկի գումար:

9. Հանձնարարագրով և Որոշմամբ նշված 1.148.300 դրամ շահութահարկի գումարը Ակտով առաջադրված լրացուցիչ հարկային պարտավորության գումարի մաս է կազմում:

10. Ընկերությունը հանձնարարագրի և որոշման մասին տեղեկացել է բանկից, երբ բանկային հաշվից փոխանցում կատարելու ժամանակ բանկը արգելել է փոխանցում կատարել:

Ընկերությունը գտնում է, որ հանձնարարագրով և Որոշմամբ խախտվել են Ընկերության՝ ՀՀ օրենքներով երաշխավորված իրավունքները և դրանք ենթակա են վերացման, հետևյալ պատճառաբանությամբ:

1. «Հարկերի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 30.2 հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ գույքի վրա արգելանք դնելու մասին հարկային մարմնի ղեկավարը հանձնարարագիր է հրապարակում: Հանձնարարագրի պատճենը ներկայացվում է հարկ վճարողին: Նույն հոդվածի 20-րդ մասի համաձայն՝ Որոշման պատճենը ոչ ուշ, քան այն ընդունելու հաջորդ օրը, պատշաճ ձևով ուղարկվում է հարկ վճարողին, ինչպես նաև այլ անձանց ու մարմիններին:

Ոչ հանձնարարագիրը և ոչ էլ որոշումը չի հանձնվել Ընկերությանը, ինչն ուղղակիորեն հանգեցրել է վերը նշված նորմերի խախտմանը:

Մինչև հանձնարարագրի և Որոշման ընդունումը՝ 23.09.2014 թ-ին, Ընկերությունը վճարել է շահութահարկի գումար: Օրենքի 30.2 հոդվածի 1-ին մասի վերլուծությունից հետևում է, որ առկա չի եղել փաստական հիմք վերը նշված հոդվածի կիրառության համար, քանի որ այն կարող էր կիրառվել միայն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորության առկայության պարագայում: Բացի այդ, եթե նույնիսկ ընդունեք, որ գումարը վճարելուց հետո դրա մասին հարկային մարմինը Որոշում ընդունելուց տեղյակ չի եղել, ապա արգելանքը ենթակա է վերացման Օրենքի 30.2 հոդվածի 26-րդ մասի իրավական հիմքով:

2. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վիճարկման հայցի վարույթ ընդունելը կասեցնում է վիճարկվող վարչական ակտի կատարումը, մինչև այդ գործով գործն, ըստ էության, լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը...:

Ընկերությունը 28.08.2014 թ-ին վիճարկման հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան, որը 04.09.2014 թ-ի որոշմամբ ընդունվել է վարույթ: Վերոշարադրյալ իրավական նորմի բովանդակությունից պարզ է դառնում, որ սույն դեպքում Ակտի կատարումը պետք է կասեցվեր: Այսինքն, դրանով չէր կարող հարկային պարտավորության գումարի գանձմանը կամ կատարման ապահովմանն ուղղված որևէ գործողություն կատարվել: Սակայն վերոնշյալ նորմի պահանջը խախտվել է, քանի որ Ընկերության հայցադիմումը ՀՀ վարչական դատարանի կողմից վարույթ ընդունելուց հետո վարչական ակտի կատարումը չի կասեցվել և որպես հետևանք դրա կատարումն ապահովելու Նպատակով Ընկերության գույքի վրա արգելանք դնելու մասին Որոշում է կայացվել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 10-րդ գլխով ընկերությունը խնդրում է անվավեր ճանաչել (վերացնել) ՀՀ ՖՆ Կոտայքի ՏՀՏ 29.09.2014 թ-ի թիվ 028483 որոշումը, ինչպես նաև ձեռնպահ մնալ 19.08.2014 թ-ի թիվ 1009650 ստուգման ակտի կատարման կապակցությամբ որևէ գործողություններ կատարելուց, մինչև դրա վիճարկման վերաբերյալ վարչական գործով վերջնական դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ 17.09.2014 թ-ի դրությամբ «Կոմսալ» ՍՊԸ-ի շահութահարկի գծով չկատարված հարկային պարտավորության չափը կազմել է 1.148.300 դրամ, ինչպես նաև ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2 հոդվածի դրույթներով, ՀՀ ֆինանսների նախարարի կողմից 29.09.2014 թ-ին հրապարակվել է թիվ 028483 հանձնարարագիրն ընկերությանը պատկանող գույքի վրա՝ ընդհանուր գումարով 1.148.300 դրամ, չկատարված պարտավորության չափով արգելանք դնելու վերաբերյալ: Արդյունքում, 29.09.2014 թ-ին ընդունվել է թիվ 028483 որոշումը, որի

համաձայն ընկերության գոյքի, բանկային հաշիվների և դրամարկղի վրա՝ գումարով 1.148.300 դրամ, դրվել է արգելանք:

Սույն գործում առկա ապացույցի, այն է՝ վճարման հանձնարարագրի թիվ 000114 անդորրագրի ուսումնասիրության արդյունքում արձանագրվեց այն փաստը, որ «Կոմսալ» ՍՊԸ-ի կողմից վճարվել է 1.150.000 դրամ, որպես շահութահարկի կանխավճար: Այսինքն, կարելի է փաստել, որ ընկերության կողմից կատարվել է 17.09.2014 թ-ի դրությամբ առկա շահութահարկի գծով չկատարված հարկային պարտավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2 հոդվածի դրույթներով, ընկերության գանգատը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

«Կոմսալ» ՍՊԸ 02.10.2014 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Կոտայքի ՏՀՏ 29.09.2014 թ-ի թիվ 028483 որոշումն անվավեր ճանաչելու վերաբերյալ, բավարարել:

Հանձնաժողովի նախագահի ժ/պ՝

